

ՀՏԴ 82.091

Գրականագիտություն

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԸ ԵՎ ՄԱՇՏՈՅՅԱՆ ԹԵՄԱՆ Միտում ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Հարուստ լեզու, գեղեցիկ հարուստ լեզու, էթնիկական ինքնություն, գոյատևելու ճանապարհ, հավերժական ինքնահաստատում, կյանքի խորհրդանիշ, հոգու կանչ, ժողովածու, ձոն, ջատագովել:

Ключевые слова: Богатый язык, красивый армянский язык, этническая идентичность, путь выживания, вечное самоутверждение, символ жизни, зов души, сборник, посвящение, превозносить.

Keywords: Rich language, the beautiful Armenian language, ethnic identity, a way of survival, eternal self-affirmation, a symbol of life, the call of the soul, a collection, dedication, to extol.

С. Багдасарян Амо Сагиян и маштоцовская тема

Одна из замечательных страниц творческой деятельности Амо Сагияна является "маштоцовская тема". Он высоко ценил роль богатого и красивого армянского языка в этнической идентичности на пути выживания и вечного самоутверждения армян.

Стихотворение А.Сагияна "Армянский язык" является одним из лучших в сборнике отечественных посвящений, в котором он превозносит армянский язык, называя его "солью", символом жизни, зовом души.

S. Bagdasaryan Hamo Saghyan and the "Mashtots" Topic.

One of the remarkable pages of Hamo Saghyan's creative activity is the Mashtots topic. He highly appreciated the role of the rich and beautiful Armenian language in ethnic identity of the nation, on the Armenians' way of survival and eternal self-affirmation.

Hamo Saghyan's poem "The Armenian Language" is one of the best in the collection of national dedications, in which he extols the Armenian language, calling it "the salt", "the symbol of life", "the call of the soul".

Համո Սահյանի ստեղծագործության ուշագրավ էջերից մեկը մաշտոցյան թեման է: Նա բարձր է գնահատել ոսկեդարից հայոց այբուբենի դերը հայի էթնիկական ինքնության, հայ ազգի գոյատևման հավերժության ինքնահաստատման ճանապարհին: Սահյանի «Հայոց լեզու» բանաստեղծությունը մայրենիի ձոներգերի հավաքածուում լավագույններից մեկն է, որի մեջ նա գովերգում է մեր մայրենին՝ անվանելով այն սեղանի աղ, օջախի ծուխ, էության խորհուրդ, ոգու կանչ:

Ժամանակակից քնարերգության երևելիքներից մեկն է Համո Սահյանը, որի պոետական քնարի ամենախոստումը հայրենասիրական և հայերենասիրական լարն է: Դա վկայում է բանաստեղծի ստեղծագործության բարձր քաղաքացիականության մասին, որի սնուցող գլխավոր երակներից մեկը հայրենի եզերքի, Հայաստանի գեղարվեստական կերպարի արտահայտությունն է: Այդ երգերում ցոլանում է հեղինակի անանց սերն առ հողը հայրենի, ուր չլսամբող գույներով մեզ են ներկայանում անձեռնակերտ քարափներն ու ձորերը, Որոտանն ու Գյազբելը, ծաղկաշատ հովիտներն ու ձորերի վրա կախված մաստրի թփերը, ջրվեժների երգեցիկ շառաչն ու տարվա եղանակների հարափոփոխ գունագեղությունը... Եվ այս ամենը՝ նուրբ դիտողականությամբ և անպաճույճ արվեստով, որպիսին լինում է միմիայն ճշմարիտ բանաստեղծությունը: Այդ երգերը հնչում են հեղինակի և հայրենիքի սիրո այնպիսի փոխադարձությամբ, որ անմիջապես ընթերցողը զգում է այս երկուսի հոգեհարազատությունը:

Սահյանի հայրենասիրական երգերի մյուս ակունքը ազգային արժանապատվության զգացումն է, որի բաղադրատարրերը՝ այլևայլ երանգներով, կերտել է բանաստեղծը՝ առաջին երգերից մինչև վերջին ժողովածուն: Հավատարիմ ազգային հիշողությանը և ստեղծված մշակութային արժեքներին՝ Սահյանը դավանում է հայ դասականների սկզբունքներին, որոնց պատմական լույսի տակ, միանգամայն նոր ձևերով, գեղարվեստական բարձր որակով կերտվել են նրա ստեղծագործությունները:

1964 թվականին «Գրական թերթում» Սահյանը գրում է մի հոդված՝ «Տողը, բառը, տառը» վերնագրով, որի մեջ նշում է. «Ասել եմ ու ասում եմ, եղել եմ, կամ ու լինելու եմ այսպես կոչված դասական ավանդների կողմնակից՝ քնարերգության մեջ: Գտնում եմ, որ այդ ավանդները չեն սպառել իրենց զարգացման

հնարավորությունները: Ես փորձել եմ ինձ տվածի չափով թարմացնել ու հարազատացնել այդ ավանդները»¹:

Հայրենիքի գեղարվեստական կերպարի կերտման համար Սահյանի հենասյուններից մեկը հայոց լեզուն է, քանզի հայրենիքն առանց մայրենի լեզվի պատկերացնել անհնար է. այն կնամանվի այն դատարկ զանգին, որը... լեզվակ չունի:

Հայոց լեզվի մասին շատ երգեր են գրվել: Անգամ այդ երգերի մեկ տողը բավական է, որ «գուշակենք» հեղինակի ով լինելը, քանի որ դրանք դարձել են «խորհրդանշային» բանալիներ. «Մեր լեզուն ճկուն է ու բարբարոս», «Արքայական խոսքը մեր կմնա հավետ», «Լսի՛ր, որդի՛ս, պատգամ որպես», «Դու սեր առաջին, առաջին մորմոր, առաջին աղոթք», «Դու մեր երթի գավազանակիր», «Ի՞նչու չես խոսում հայերեն», «Հայ լեզուն տունն է հայուն», «Մեր լեզուն մեր խիղճն է դա»...

Յուզակը շատ է երկար, ուրեմն՝ թեման կրկնված է ու տարածված: Սա նշանակում է, որ ճշմարիտ, իսկական արվեստագետն այնպես պետք է կարողանա հյուսել բառը բառին, տողը՝ տողին, որ ստեղծվի ինքնատիպ ձոն, որ կհուզի ընթերցողին, կխոսի նրա սրտի հետ և տեղ կգրադեցնի հայոց լեզվին նվիրված ներբողների շղթայում: Սահյանին այդ հաջողվել է անել բարձր արվեստով, քանի որ «Հայոց լեզու» բանաստեղծությունը այդ թեմայով գրված պոեզիայի լավագույն նմուշներից մեկն է: Բանաստեղծության մեջ ամեն մի բառ դառնում է մի խորհրդանիշ. հեղինակը ոգու նյութ է դարձրել խիղճը, սեղանի հացը, ոգու կանչը, բերանի համը, տան ծուխը, ինքնության աղը, էության խորհուրդը: Ընդամենը չորս քառատողում բանաստեղծը քանդակում է ժողովրդի լինելության և հարատևության խորհրդի պատկերը, ցույց տալիս հայոց լեզվի և հայի անբաժանելիությունը, մեկ մարմին և մեկ հոգի լինելը.

*Մեր լեզուն արյունն է մեր,
Արյունից ավելի թանկ,
Մեր բուրմունքն ու գույնն է մեր,
Մեր լեզուն մենք ենք ու կանք:
Նա պիտի մեր առաջին
Ըլ վերջին սերը լինի,
Ի՞նչ ունենք էլ աշխարհում,
Որ այսքան մերը լինի:*

Սահյանն իրեն գրական ուսուցիչ է համարում, ապա շարունակում. «Ես ինձ համարում եմ բուն ժողովրդական (Քուչակ-Սայաթ-Նովա-Թումանյան) և ոգեղեն(Նարեկացի-Ծնորհալի-Չարենց) գծի մեջտեղի բանաստեղծ և ձգտել եմ այն բանին, որ այս երկու թվերը իմ մեջ ձուլվեն, խառնվեն իրար: Ես ձգտել եմ ժողովրդական-ֆոլկլորային մտածողությունը դնել մյուս ձևերի մեջ: Բայց, համենայն դեպս, ես պետք է խոստովանեմ, որ ժողովրդական մտածողությունն ինձ ավելի հարազատ է եղել:

Իմ գրական հակումները բազմաթիվ կողմերով պայմանավորված են մեր լեզվով. մեր լեզուն մեր ազգային նկարագիրը լիովին պահպանել է»²:

Ավանդականին հավատարմ Սահյանը խորությամբ է ընկալում նաև նորը՝ տրամադրության, զգացումների արտահայտման այնպիսի պարզությամբ, որ թվում է՝ ժողովրդական մտքեր են գրառված՝ վարակիչ, խորաթափանց, խոսուն: Նման ռոմ է գրված «Գարունդ հայերեն է գալիս» բանաստեղծությունը, որում բացահայտ երևում է գրողի ռճի գեղագիտությունը: Հայոց լեզվին, հայերենին Սահյանը մոտենում է ճշմարիտ գեղագետի հատուկ ակնածանքով.

*Գարունդ հայերեն է գալիս,
Զյուներդ հայերեն են լալիս
Հայերեն են հորդում ջրերդ:*

Բանաստեղծության մեջ գրողն զնահատում է հայերենը և իր հայրենիքում՝ Հայաստանում, ամեն-ամեն ինչ պետք է լինի և կա հայերեն. հավքերի երգը, խոտերի հերկը, գրերի տոկալը, արևի ծագելը, ծառերի ծաղկելը, բառերի պայթյունը... Բանաստեղծության ընթացքն իր լուծումն է ստանում գրողի

¹ Ը. Դավթյան, «Համո Սահյան բանաստեղծի հավատամքը», Երևան, 2004, էջ 147:

² Հ. Սահյան, «Բանաստեղծությունը ցավից է ծնվում», «Գարուն», 1984, N9, էջ 43:

հաստատուն եզրակացությամբ, որ վկայում է իր ժողովրդի լուսավոր ապագայի հանդեպ մեծ հավատով և լավատենությամբ:

*Թող Աստված եղածը պահի,
Եվ հենտ ինչ էլ պատահի,
Ջյուներդ հայերեն են գալու,
Գարունդ հայերեն է գալու,
Հայերեն են գալու դարերդ:*

Լեզուն հրաշք է, այո՛, քանի որ արվեստը ստեղծվում է նրանով, գրական արժեքները ստեղծվում են խոսքով: Հայոց հարուստ ու ոսկեդենիկ այբուբենը հզոր զենք է եղել արիասիրտ հայ ժողովրդի համար՝ պահպանելու ինքնությունությունը, անկախությունն ու մշակույթը: Լյանքի և մահվան դարավոր պայքարում հայոց լեզուն նույնպես ենթարկվել է ահավոր ճնշման և հալածանքի: Մեր նենգ դրկիցները բազմիցս փորձել են ոչնչացնել հայի լեզուն, բայց զարմանալիորեն նա հաղթահարել է բոլոր դժվարությունները:

Պատմությանը հայտնի են դեպքեր, երբ ժողովուրդն ապրում է, լեզուն՝ մեռնում: Այդպես չէ մեզ՝ հայերիս համար: Ընդհակառակը, երբ մեզ ցանկացել են բնաջնջել, հայոց լեզուն սատարել է, օգնել՝ ապրելու, հաղթելու, մեր բազկի թափը ավելի ուժգնացնելու: Իր սեփական հողի վրա ապրող մարդը, ձեռքին բռնելով սուրը, հոգում և սրտում՝ ոգեկոչող խոսքը, չի երկնչում մահից, այլ դառնում է հայրենիքին ձուլված անհատ, հավերժող գոյություն: Հետաքրքիր է, երբ Սահյանին հայտնում են, որ կործանարար զենք է ստեղծվել, ասում է. «Այդ ստեղծվող զենքն էլ է խոսք: Խոսքն ատումից ուժեղ է: Ամեն ինչ խոսքից է ծնվում: Բնությունն էլ Արարչի խոսքն է. մեկ էլ տեսար մի քամի գցեց, ծովը շարժեց, անտառը շարժեց, խոսեց, խոսեցրեց ու լռեց»¹:

Հայոց լեզվին նվիրված մեկ այլ բանաստեղծության մեջ բանաստեղծը ցույց է տալիս, որ ստեղծման, արարաման օրից նրանով դարձել ենք տուն ու երկիր, քանի որ նա եղել է եղեգան փողի կանչ: Սահյանի հավաստմամբ՝ հնարավոր է ապրել առանց հողի, բայց անհնար է ապրել առանց մայրենի լեզվի, որ ոգին է հայի, իսկ առանց ոգու հայը հաստատ չի կարող ապրել:

*Դու ոգին ես եղել մեր եղեգան փողի,
Ոգու կանչն ես եղել մեր պայքարող...
Կարող էինք ապրել անգամ առանց հողի,
Բայց առանց քեզ ապրել չէինք կարող:*

Հայրենասեր բանաստեղծը հաճախ է անդրադարձել մայրենի լեզվի գովքին՝ գտնելով, որ նա հնչել է որպես կովի կանչող շեփոր, մե'րթ հառաչել որպես ցավոտ սիրտ, մե'րթ հյուսել առասպել ու էպոս, հեքիաթ, ասք ու աղոթք, անտունի և հորովել: Լեզուն իր մաքրությունն առել է արևի շողից, լուսավորել մեր վերելքն ու դարձել մարտական փող՝ Ավարայրից մինչև Կերչ: «Մե'րթ հնչել ես որպես կովի կանչող շեփոր» բանաստեղծությունը թեև Սահյանի փոքրակտավ գործերից է, բայց այստեղ ասես խտացված է հայ ժողովրդի կենսապատումը, նրա անցած դժվարին, բայց հերոսական ճանապարհը, իսկ նրա երթը «գլխավորել» է հայոց ոսկեդենիկը: Այդպես է, երբ բանաստեղծը մոտենում է ժողովրդական ակունքներին, նրա երգը ձեռք է բերում խորություն և ամենակարևորը՝ արտահայտչականություն: Սահյանն իմաստուն արձանագրող չէ, այլ զրուցում է հայոց լեզվի հետ և բացում իր սիրտը: Գրողի ասելիքն ավելի հնչուն շեշտեր է քնդունում բանաստեղծության վերջում, երբ նա «ապացուցում է», որ անհնար է ապրել առանց մեր լեզվի, քանզի նա հայի գոյություն արևն է, մեր լինելության ոգին:

*Դու հնչում ես ահա որպես երգ ու երդում
Շրթունքների վրա իմ սերնդի,
Եղբայրական բոլոր լեզուների երթում
Սրտի խոսքն ես խոսում հողագնդի:*

*Հինավուրց ու նորոգ դու իմ հայոց լեզու,
Դու ավելի փայլաթամ պիտի ծաղկես,*

¹ Հ. Հովնաթյան, «Ժոստում է Համո Սահյանը», Երևան, 1992, էջ 97:

*Երբ մեր նրազն անգամ հայերեն է հյուսվում,
Էլ կարո՞ղ ենք ապրել մենք առանց քեզ:*

Միքայել Նալբանդյանը, ծանոթանալով աշխարհի լեզուներին, հանգել է այն ճշմարտությանը, որ «ժողովրդի լեզվի միջոցով կարող ենք ավելի հանգամանորեն ճանաչել մի ժողովուրդ, քան թե նրա պատմական հիշատակարաններով»: Դեռ ավելին՝ Նալբանդյանը նկատում է, որ ամեն մի ժողովուրդ ունի իր ոգին և այդ ոգին նրա լեզուն է: Այդ ճշմարտությունն իր նրգերով հաստատել է Համո Սահյանը:

Բախտավորություն ասվածը տարբեր ձևերով և իմաստներով կարելի է բացատրել. ինչքան մարդ, այնքան բացատրություն: Բայց Սահյանը գրել է այսպես.

*Բախտավորությունն այն է կյանքում,
Որ դու պոկում ես մի հին մացառ,
Մի մարզ ես ջրում, տնկում ես մի ծառ
Եվ մի չար հողմի ուղին փակում...*

Փաստենք, որ Սահյանը բախտավոր աստղի տակ ծնված երջանիկ բանաստեղծներից մեկն է, որի անունն ու խոսքը սիրով մնում են կենդանի հայ ժողովրդի շուրթերին: Այն կմնա այնքան, որքան կլինի հավերժի ճամփորդ հայը:

Գրականություն

1. Հ. Սահյան, «Տոհմի կանչը», Երևան, 1981:
2. Հ. Սահյան, «Հայաստանը նրգերի մեջ», Երևան, 1962:
3. Հ. Սահյան, «Հատընտիր», Երևան, 2001:
4. Հ. Սահյան, «Ինձ բացակա չդնեք», Երևան, 2003:
5. Հ. Հովնաթյան, «Խոսում է Համո Սահյանը», Երևան, 1992:
6. Շ. Դավթյան, «Համո Սահյան բանաստեղծի հավատամքը», Երևան, 2004:
7. «Գարուն» ամսագիր, N 9, 1984:

Տեղեկություններ հեղինակի մասին

Սիրուն Բադդասարյան – բ.գ.թ., դոցենտ, հայ գրականության և լրագրության ամբիոն

E-mail: sirun1949baxdasaryan@mail.ru

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեկիայի անդամ, բ.գ.դ. Ս. Խանյանը: